ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

10.04.2020թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2020/16-12-ԵՊԲՀ>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան <<____>>_____ 20____թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Ա. Մուրադյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Վաճառող>> մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 10.04.2020թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2020/16-12-ԵՊԲՀ>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ, 8.6-րդ կետերը, <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ի կողմից 14.05.2020թ.-ին ներկայացրած թիվ 14052020/1 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 10.04.2020թ. կնքված N <<ԳՀԱՊՁԲ-2020/16-12-ԵՊԲՀ>> գնման պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել մինչև 2020 թվականի հունիսի 09-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ	**<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**ք. Երևան, Արզումանյան 32-10**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**<<Ամերիաբանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 1570011489540100**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 01210095**
	էլ. հասցեն lawyer@c-e.am
	Հեռ. 010-20-97-77
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**տնօրեն՝ Բ. Թադևոսյան**
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

SOGHOYAN ANGIN 7209900047

Digitally signed by SOGHOYAN ANGIN 7209900047
DN: c=AM, sn=•••••••, givenName=••••••, serialNumber=aea5c8db7c9, cn=SOGHOYAN ANGIN 7209900047
Date: 2020.05.18 16:01:46 +04'00'

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.05.19 15:44:55 AMST